ԵԶՐԱԿԱՑՈՒԹՅՈՒՆ N 2- 2

հերթական համարը

ՀՀ վարչապետի 2009 թվականի դեկտեմբերի 22-ի N 1064-Ա որոշմամբ ստեղծված ՀՀ համայնքների քաղաքաշինական ծրագրային փաստաթղթերի մշակման աշխատանքները համակարգող միջգերատեսչական հանձնաժողովի

ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան (Գորայք, Ծղուկ, Սառնակունք և Սպանդարյան բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-6 համակցված տարածական պլանավորման փաստաթղթի նախագծի վերաբերյալ

Ղեկավարվելով ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 13-րդ կետի պահանջներով.

1. Հանձնաժողովը տալիս է դրական եզրակացություն՝ ՀՀ Սյունիքի մարզի Սիսիան (Գորայք, Ծղուկ, Սառնակունք և Սպանդարյան բնակավայրերը) համայնքը ներառող միկրոռեգիոնալ մակարդակի Սյունիք-6 համակցված տարածական պլանավորման նախագծին և նախագծով առաջարկվող հողամասերի նպատակային և գործառնական նշանակությունների փոփոխություններին (աղյուսակները կցվում են):

2. Հիմք ընդունելով սույն եզրակացությունը Սիսիան (Գորայք, Ծղուկ, Սառնակունք և Սպանդարյան բնակավայրերը) համայնքի ղեկավարին առաջարկվում է նախագիծը սահմանված կարգով ներկայացնել ավագանիների հաստատմանը, որից հետո հաստատել ՀՀ Սյունիքի մարզպետի համապատասխան որոշմամբ:

3. Հետագա գործառույթներն իրականացնել ՀՀ օրենսդրության և նորմատիվատեխնիկական փաստաթղթերի պահանջներին համապատասխան:

4. ՀՀ Սյունիքի մարզպետին և Սիսիան (Գորայք, Ծղուկ, Սառնակունք և Սպանդարյան բնակավայրերը) համայնքի ղեկավարին՝ ապահովել ՀՀ կառավարության 2011 թվականի դեկտեմբերի 29-ի N 1920-Ն որոշմամբ հաստատված կարգի 22-րդ և 23-րդ կետերի պահանջների կատարումը:

Հանձնաժողովի նախագահ՝		
		Ե.Վարդանյան
Հանձնաժողովի քարտուղար՝		
		Հ.Դավթյան

Երևան, «3» «հուլիսի» 2024թ.